

ՄԱՍԻՍ

ԾԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԳՋԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՏՐԳ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 47

17 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Դրանիս Նոր Հասանքի Փորձ մը

Մասին Ընթերցող Հասարակութեան

Սխալմունք մը [Պատճառով]

Մազունեան, Շաղանեան, Էսկար Շանին

Կոյն Տիրանայր

Դանգլուն Արձանայ [Շանդեղի]

Դերման Դասխարակութեան Մեքոսք

Ա. Տարիի Նիսրեռն Յանկը

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԽՄԲ.

ՋԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

X.

ԼԵԻՈՆ ԷՍԱՋԱՆԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՔԱԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻՀԱՆ

1907

THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՍ

յԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ,
ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարի ներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջլային տկարութիւնները, հին և նոր գաղիական արտերը: Այս վերջին արտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտմարով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքչարթի օրերը միայն ձրի:



Անկարելի է օր ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, օրովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տագնապի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռփի, ոսփի ու ոսփի եւ ձեռփի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործումը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդատաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերութեան վաճառատուններուն մէջ:

ՍԻՆԿԵՐ
ԿԱՅՍ
ՊԱՆԱՏԱՆ
ՀԱՅԹԱՅԻՉ

- | | |
|---------------|---|
| ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ԲԵՐԱ. | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ՊԱՆԱՏԱՆ | 1. Սինկեր խան, Թիւնէլին հաւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՍԻՆԿԵՐ | 1. Սուլթան Համամ. |
| | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13. |
| | (2 արշը Պօյու, Թ. 120 . |

Դասեր եւ Գարգուլիւններ ձրի:

Կատարեալ Երաւաստութիւն:

Մասնագիւղեր գաւառներու բոլոր ֆալաֆներուն մէջ


Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՄԱՆՁՈՒՄ Է Միակ առաւելան Հայաթերթը, կը հրատարակուի ար-
շապէս, և առաւել խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլի-
սի և արուարձաններու մէջն կողմը, բովանդակելով հետաքրքիրներ, քա-
ղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, զրակօն, ան-
տեսական և ընկերային յօդուածներ: Զորեքչարթի եւ Հայաթ օրերը կը
հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւ-
տրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարս: Տարեկան բա-
ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դր., Գաւառ՝ 108, արատաւման՝ 25
ֆր.: Վեցամեայ՝ Պոլիս՝ 50, Գաւառ՝ 60, արատաւման՝ 18 ֆր.: Սմէն
գրութիւն ուղղել Տէր եւ. Տնօրէն Յովնանէս Ֆ. էֆ. Գայսէրեանի
հասցէին՝ 38, Պատը Ալի Ճանտալի:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՓԱՐԱՆ, ԱՏԱԲԱՅԱՐ

Հայունեաց Վարժարանի նոյառակն է Հայ ազգայնական տալ լուրջ
դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտէրէններ և զաւ-
տիարակութեան դարձին օժանդակներ պատրաստելու համար: Վարժա-
րանին տեսչութիւնը աշակերտութիւններն ֆիզիքական, իմացական և
բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հողածութեան առարկայ
կ'ընէ: Բնիկ և Ամիրիկայի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուց-
չական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները,
ինչպէս նաեւ ընտկան, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտու-
թիւններ: Մնացուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիրութեան, կարի և
ձեռագործի դասերը: Գիւերօթիկներու տարեթոշակն է 12 օտմ. ոսկի,
որուն կէսը պէտք է հասուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը՝ Ծնունդ.
գի արձակուրդին: Դաշնակի և երգեստի համար կը պահանջուի 5, 3
և 2½ օտմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին
յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դ. իրիկունը:
Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայազիրը կամ
գիմն Մր. Բիթի, Պայպը Հատու, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. էֆ.
Գամալձեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ստաթազար:

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.—Հրապարակ ելաւ Քաթմի այս աշխատասի-
րութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և ընկերական հարցերու
վրայ չափական և հետաքրքրաշարժ տեսութիւններ, ժողովրդական
ոճով: Քաթմի գրեակաները արդէն ծանօթ ըլլալով հանրութեան,
վստահօրէն անոր այս գործն ալ պիտի արժանանայ այն սիրալիր ըն-
դունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին զրիչ ար-
տագրութիւնները: Գինը, խիստ աժան գրուած է, որպէս զի ժողո-
վուրդին մէջն դասակարգին մատչելի ըլլայ: 3½ դր., 200 էջ ունե-
ցող այս գիրքին համար: Կը ծախուի բոլոր գրադատներուն քով:



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԳՋԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎԻՔ ԱՐԱՐԷՆ

55րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 47

17 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ ՓՈՐՁ ՄԸ

Մեր Գիրքի գրականութեան աշխարհը, որ առեցնէ մը իվեր բաւական միտմտարիչ բեղմնաւորութիւն մը կը ցուցնէ, այս օրեր փթթումը տեսաւ հատորի մը, Նոր Տաղեր, որ նշանակելի էջ մը կը բանայ Հայ բանաստեղծութեան մէջ: Երիտասարդ հեղինակին՝ Միսաք Մեծարենցի այս գիրքը, իր գրական և արուեստական կրկնակ լնոյթովը՝ կը պարզէ երևելոյթ մը՝ որ յատկանշական է և կոչումը ունի իր վրայ ուշադրութիւն հրաւիրելու, մեծ համեմատութիւնով մը քան որիչ ո՛ր և է հրատարակութիւն: Նոր Տաղերը կը հնչեցնէ փող մը, որ նոր է մեր բանաստեղծութեան համար, և այդ շունչը, այդ ձգտումը հանրութեան կը ներկայանայ չեչուտած ձևով մը: Ահնայօղիակի, խորհրդապաշտութեան փողն է ադ, հնչող իր ամէնէն սաստիկ ու զայրազին ճիգովը եւ աղամկայութիւնովը: Այդ ձայնը, գրական այդ եղանակը, որուն փողահարութեանը յանձնուեր է, բոլոր ուժովը իր շունչին, գիրքին հեղինակը, մեր բանաստեղծութիւնը կը ցնցէ ամբապէս և կը սթափեցնէ իր դարաւոր խաղաղ հանգիստէն: Մեծարենցի փորձած այդ գրական ուղղութիւնը, ըմբոստ չեղումը, յախուս խտրութեամբ մըն է՝ մեր բանաստեղծութեան բոլոր ծանօթ ուղիներէն, ձգտումներէն, չեղում՝ զոր հեղինակը թերթեալի գլխաւոր ցամ էր տակէ առաջ իր Ծիածանով:

Այսօր , սեկնպօղիսդ ձգտումի այդ ուղղութիւնը՝ կը ներկայանայ աւելի՛ համոզուած , աւելի՛ անձնուէր , աւելի՛ արմատաւոր մշակութիւն մը հեղինակէն , որ իր բոլոր թափը , հաճոյքը , կորովը արամաղրած ըլլալ կ'երեւայ , և է՛ , այդ նուազահարս թեան հռանդին , գինովցած ու հիւնոստացած իր հալէզին հանած ձայներուն ինքնազուարճ գիւթութիւններէն ու մեղեգիներէն :

Բայց ի՞նչ է այդ սեկնպօղիսն թմրուկին արժէքը և կոչումը՝ մեր գրականութեան համար , և հաւանութեան ի՞նչ քուէ կը դանէ անոր գոյութեան իրաւունքը : Առանց երկմտութեան և վարանողական դեղեւու մներու՝ պէտք է ըսել թէ՛ բանաստեղծութիւնը զոր կը փորձէ Մեծարենց , և որուն փողանարութեանն է նուիրուելը ոգւին , անխմտ և զառանցական ճիգ մըն է , ապարդիւն ոչորում մը՝ որ իմաստ ու արժէք չունի : Այդ փորձը նաեւ վտանդ մըն է մեր արդէն վախաբանատեղծութեան կեանքին համար , սպառնալից վտանդ մը՝ որուն մեր գրականութեան մէջ տապաւնութեան պէտք է արգելք ըլլալ , և պէտք է խորշիլ անոր պատուասը մեր մտանշագրութեան ներարկել : Պարտէզի մը մէջ՝ ուր բազմերկեան ծաղիկներ մեծ թիւ մը կը համբեն , մուտքնոր այլակերպ ծաղիկի մը , չխանգարելու գեղը միւսներուն և չնստապնդելու անոնց տեսքը , կորսուելով հողին մէջ հոծ ու թանձրասաղարթ բուրաստանին : Բայց բուրաստանի մը մէջ՝ ուր հազիւ կակաչ մը ու նարկիս մը գլուխներն կը ցցեն՝ մուտքը կովացնողներով պնդուած թագարի մը , անոնց շատ մօտ , անոնց քիթին տակ , անոնց հետ մարմնացած , ու լուծուած , կը խաթարէ գեղը ու հրապոյրը միւս զրգալի ծաղիկներուն : Պրանսական գրականութեան մէջ , գոյութիւնը խորհրդապաշտ գպրոցի մը , սահմանափակ ու անձուկ շրջանակի մը մէջ կաշկանդուած , արատ մը չբերելու ամբողջին հոյակապ ու պանծալի դրոշմին և չկրնար ազդել պղտորելու ուժը և ազդեցութիւնը անոր սփռելիք բոլորին : Բայց մեր գրականութեան մէջ , ուր բանաստեղծութիւնը շատ համեստ մշակներ ու ծաղիկներ միայն կը համբէ , սեկնպօղիսդ ուղղութեան մը ազդեցութիւնը կը մնասէ միւսներուն կեանքին , և օր մը , լայն սահմանի մը մէջ մշակուած ատեն , աւելի՛ տիրական դառնալով , կ'աւերէ բեղմնաւորութիւնը ուրիշ ծաղիկներու , կ'ընկուզէ զանոնք , իր թունաւոր ազդեցութիւնովը խաթարելով ու սպաննելով անոնց կեանքը :

Թէ ինչո՞ւ այս պարսաւը սեկնպօղիսին , պարզ է ադ . — Որովհետեւ անխմտ և անհասկնալի է ուղղութիւնը այդ գպրոցին : Ի՞նչ է անոր ձգտումը և իրեն կեանք տուող արուեստագիտական յորինուածքը : Բաւերը ու բացատրութիւնները , — յաճախ գաղափարներն ալ , — անկերպարանել թանձրացեալ իմաստներու , անակամացած գոյականներու և գոյականացած անականներու յորինուածքով մը , որ , քերականորէն հիմնովին անվերլուծելի , ո՛չ մէկ գաղափար կը ցոլացնէ , և ,

ո՛չ մէկ զգացում կը թարգմանէ : Բանաստեղծի քմահաճոյք մը , քերթողական խաղ մը , արուեստակեալ ու լռնազրօսիկ բառախաղութիւն մը , որ ո՛չ մէկ կերպով կը հակակշռէ դադափարի պակասը , իմաստի ունայնութիւնը և նախադասութիւններու ոչնչաբանութիւնը : Կեղծ ու վաղանցիկ անգոյրներով չպարուած կին մը , սուտ գեղեցկութեան մը պատրանքը զգեցած , որուն ներքինը ոչի՛նչ կ'արժէ , մօտէն դիտուած , երբ մանաւանդ , — կա՛րճ կեանք , — դէմքին ներկերն ալ թափած ըլլան : Թող այդ լեզուով քանի մը բառ խօսի նոյն ինքն այդ արուեստին հերոսը Մեծարենյ , որ ջերմուանդօրէն ուխտադիր առաջին ռահ-վիրան կ'ըլլայ մեր մէջ ի՛ր Նոր . . . և . . . նորանշան ալ Տաղերով .—

Հօրհօ՛յ , սուտ յորդառաւ դարբին ծոցն է նետուեր ,

Գաղջ սարվանճով իր ջուրին՝ ուր արեւը կ'ապրի դեռ :

Վանքին բակը կ'աղօթեն հսկայ ծառեր տարօրէն .

Հողը ծծեց ջուրերուն **սարվանճն**՝ որ դեռ կը հնչէ ,

Եւ հիմա՛յ թա՛ց՝ կը խօսայ իր երկունքին ապագայ :

Այսօր կարվառդ երազէ մը արձնցայ ,

. . . Զոր ծափեցին իմ երազներս ծնծղայ .

Իմ ծարաւահիւժ , իմ ուրբեալսի

Իրիկուններու շուշանին վրայ լուրջ .

Անձրեւոտ գիշեր , գծա՛ծ քահանայ [! ?] .

Մինչև որ լենա՛յ բաժակն այս պարապ

Իմ երազներու՝ որ ոսկեմըրափ

Կեցե՛ր է ցրտոտ մարմարին վըրայ :

Ու կը խուժէ սարեւն վար գործ խոնամքիս

Ճերմակ հոյլ մը վաղընշական անուշներէն .

Ու մըսածուսն ալ , հէ՛ք նժդեհն քահանայ ,

Խաչ հանելով [? ! ?] կ'ըսէ բառեր լուսնդէն .

Բաժնուեցան իրամէ արփ ու մըսակ

Լո՛ւս՝ ձեռքերնին հակոխ դըրած մէկմէկու .

Սարերուն վրայ կանանչ լոյս մը կը ցածի ,

Աղբիւրներուն կ'ելլէ խմբերգն արձաքի :

Աղբիւրին լուրջ ջուրերուն մէջ հառագայթ մը կ'իյնայ շեղ

Թառերուն վրայ ծռչուններու խմբերգն հիմա կ'անձրեւէ .

Խորհրդածեցէ՛ք , ի՛նչ կ'ըսեն այս տողերը , ի՛նչ կը թարգմանեն : Սիրուն նախադասութիւններ , չողչողուն խօսքեր , բայց ի՛նչ կ'ըսեն : Ի՛նչ պէտք , նաեւ , բառերու այդ տեսակ բանազրօսիկ այլակերպութիւններով ըսելու՝ ինչ որ կարելի է շատ աւելի չքեղ ու գեղակաւոյց բանաստեղծութիւնով ու լեզուով մը արտայայտել : Նուա՞ղ պիտի արժէր այդ կերպը : Բայց սեկսոյժիսնի անունով , ամէն այլանդակութիւն , ամէ՛ն արտառօցութիւն և ամէն անհեթեթութիւն ներքի կը դնեն կ'եւրեւայ թէ՛ քերթողութեան այս նորանշան աշխատաւորները , որոնց մէջ

մոլեհամեղ առաքելութեան դեր մը կը ստանձնէ Մեծարկնց, ուխտադիր հաւատքով՝ նորոգութեան իր նոր աղանդին: Ո՛չ, սիրելի պարոն, ո՛չ, նորութիւն չէ՛ ադ, հաճելի նորութիւն մը չէ՛, և սիրագործութիւն մը չպիտի ըլլայ անոր հեղինակութիւնը, անոր հայրութիւնը ստանձնել մեր գրականութեան մէջ: Այդ ուղղութիւնը, գրական այդ ձգտումը մեր բանաստեղծութեան համար մոլորանքն է, սայթաքումը արուեստին ճշմարիտ ու ցանկալի ուղիէն: Գեղեցիկ հանգրուան մը չէ՛ որ կ'առաջնորդէ ան, այլ անկումի դուռը, որմէ պէտք է խորշիլ ու խուսափիլ: Բառերու բռնադրօսիկ շարադասութիւններ, մտադամին պատկերներ ու քմածին խորհրդաւորութեան մը զգեստը չեն սր կը չինեն ճշմարիտ բանաստեղծութիւնը: Գաղափարը բնականօրէն կը ըզլի միտքէն և պէտք է արտայայտուի յղացումի ու արտայայտութեան իր յստակութիւնովը, պճնուած միայն լեզուին ու գրականութեան դեղեցկագիրական միջերգը կազմող փետուրներով: Գաղափարները, բառերը, լեզուն ծածկելուն և այլակերպելուն մէջ չկայանար գեղեցկութիւնը, յաջողութիւնը, բանաստեղծութիւնը, տաղանդին գրոշմը: Անգլիական գրականութիւնը, իր Թէնիսքններով, Սուինսյըրններով, Քիցերով, Պայրըններով, Քիփլինկներով, Բօքսով և կուռ իմաստասիրութեան մը վրայ դարձնուած իր դարաւոր հոյակապ չէնքով՝ պէտք չունեցաւ երբեք ահնայօրիկ կեղեւին, ըլլալու համար այն հզօր ազդակը՝ որ ազգերու միտքն է գրաւած, և լուսաճաճանչ այն փարօսը՝ որ հսկայ դէմքերու միտքի ցղացումներովն է բռնկած ու բոցալաւ: Ճրանասական գրականութեան մէջ՝ բանաստեղծութիւնը՝ մինչև զմայլելի Սիւլլի Բուսոմը՝ պէտք չէ ունեցած ահնայօրիկ ըլլալու, հռչակուելու համար ամբողջ ազգերու անդուգական բանաստեղծութիւնը, գերագոյն բանաստեղծութիւնը՝ իր Վէպէնով և Պօքըլէնով: Եւ եթէ Վէպէն՝ կը մատնուի խորհրդապաշտներէն իր թեթեւ հակումներովը խորհրդապաշտ ձգտումի, որուն գրոշմովը կը թրթռան իր տաղերէն ոմանք և ուր այդ շունչէն հոգեցիկ հետք մը կը զգացուի, իրը Գաղափարի խորհրդապաշտութիւնն է, ժամանակակից այլարանութիւնը, և ոչ երբեք բառերու խորհրդապաշտութիւնը: Գաղափարի անսկզկութիւն մը՝ բառական զարդարանքներու, բռնադրօսիկ գեղեցկաբանութիւններու կեղեւովը պարակել, — ինչ որ սիրական ճիգը կ'երևայ ըլլալ մեր ահնայօրիկներուն, — հեզնել է զօրութիւնը Արուեստին, որ կարող է ամէնէն հզօր ու խորիմաստ գաղափարները և զգայութիւնները թարգմանելու՝ համարժէք վեհութիւնովը յղացումին, յստակ, հասկնալի ու բնական առանց երբեք իր արժէքէն ու բարձրութենէն նշոյլ մը կորսնցնելու, երբ վարպետ է արուեստագէտը և տէր իր գրիչին: Սնամէջ ներքին մը պարտկող կեղեւը չուտով կը պատուի կ'իյնայ, և, վա՛յ, երբ միջուկը անզօր է ինքզինքը փրկելու:

Նոր Տաղերու ընթերցումը չի՝ տպաւորեր ու չ'ազդեր : Թոշոր պատառ մը կայ հոն , անհուն գոտարկ մը , որ չօչափելի , կայուն , հաստատ ոչինչ կը ցոյցնէ իր բառիզներուն մէջ թափառողին : Թեթեւ սարսուռներ , տարտամ զգայութիւններ , հպանցիկ երեւոյթներ՝ աղօտ փոսփորափայլութենէ մը ծնած , որուն մէջ կը չըջարկին , կը զաւարտին , կը ծխան , և ուրիշ ոչինչ : Այդ պարագին մէջ , ուր խաւարամած մթութիւն մըն ալ սպրդած է , զուր տեղը կը խարխալէ մարդ ձեռքին կռուան մը՝ որուն կռուի , իր թափառումին իբր նշանակէտ , զոր գոհելու յոյսով մտած է հոն : Այդ կռուանը , այդ նշանակէտը կը խուսափի միշտ , կը խուսափի չարաչար , չգանուիր : Ամբողջ գիրքին մէջ , ո՛չ մէկ էջ՝ որ տպաւորէ , որ ազդէ , որ ցնցէ , որ խորհրդածուէ տայ :

Ան է բանաստեղծութիւնը , իր կոչումը , իր դերը . . . ա՛ն է արդեօք ան՝ համալուծովը խորհրդապաշտներուն : Բայց է՞ որ հո՞ն ուր գաղափար , նիւթի կր բացակային , արտաքին պաճաճանքները և սնգոյրը չստով կը մտանն իրենց սուտ կեղեւը , սղաննելով ամբողջին արմէքը : Ու , նշմարելի է յայտնապէս , — և տախկա նշանակելի մէկ կողմը կը կազմէ Կեօսիւնցի այս նոր քերթուածներուն , — որ Տաղերուն մէջ հիմնովին կը պակսին՝ Նիւթը և գաղափարը : Ո՛չ իսկ գիւտ մը , նորութեան հրապարակ մը , անակնկալ ելքի մը զիւթանքը՝ այդ քերթուածներուն մէջ : Իւրաքանչիւր քերթուածի ելքին՝ միաքի առջև կը ցցուի հարցումը թէ՛ ի՞նչ եղաւ , ի՞նչ ըստ բանաստեղծը : Ու ընթերցողը անխաբան կը վճռէ թէ՛ ոչինչ : Ահաւասիկ ո՛ւր կը կայանայ մեծ թերինքէն մէկն ալ՝ Տաղերու քերթուածներուն Զգայութիւններ , մեկամաղձութիւններ , թախիծներ , հոգեկան խռովքներ , և միայն ասոնք , չարունակ , մէկ ծայրէն միւսը , բաղձանքներ , ցանկութիւններ , երազներ , «Ըլլայի՛»ներու նոր սաղմոսով մը աղօթերգուած , բուրվաւը ձեռքը՝ Եսի տաճարին նուիրուած լանկարկութիւններով , անվհատ անձնականութիւն մը , եսապաշտ կուրացումով անձնական բանաստեղծութիւն մը , որ կը նուիրագործուի այդ բաղինին ընծայարկութիւնովը սրբազան պաշտարի մը , — նուիրական մատենին չաստուածը՝ նեղինակին լուսանկարը , զոր ինք անձնա՛նք կը մատուցանէ հաւատացեալներուն , ձախորդ մատուցումով մը որ՝ Ուրիշնէ՛ր կը նուիրեն և կը ցուցադրեն տաճարին տէր չաստուածին փառաբանութիւնը և նուիրականութիւնը խորհրդանշող նկարներ :

Գիրքին ամբողջ ընթացքին մէջ , Գաղափարի ու Նիւթի հիմքէն զուրկ , տիրապէս անձնական բանաստեղծութիւն մը , խանձարուրած անխմտ ու արտառոց խորհրդապաշտութեան մը ձորձորով , անմարտելի և յուսահատեցուցիչ է : Պէտք է աւելցնել որ՝ զրիչի ճկունութիւնը , լեզուին տիրացումը և գիտակցութիւնը , նկարագրելու կարողութիւնը

չէ՛ որ կը պակսին Մեծարեւոյն : Յաջող նկարագրող մը կը հանդիսանայ ինք իր Տաղերուն մէջ , և ունի նկարագրութիւններու յորդութիւն մը , բաւերու ներդաշնակութիւն մը , պատկերներու կենդանացողիչ վրձին մը , նմանաձայնութիւններու հնչական դաշնակութիւն մը՝ ճշմարտապէս հրապուրիչ ու համակրելի : Եւ իր գիրքը , — մասնաւորապէս «Ըլլայի՛» հատուածը , — մերկացած արուեստական յորինուածքին խաթարումներէն , գեղեցիկ օրհներգութիւն մըն է , բնութեան ու կեանքին մեծավայելութիւններուն ձօնգում , արտադեղ տաղերգութիւնը բնութեանապաշտ կարօտներէ , յափշտակութիւններէ և արեւոյթութիւններէ յուզուած հոգիի մը : Ի՞նչ որ թերին կը կազմէ Մեծարեւոյն փորձած բանաստեղծութեան , հետեւաբար իր հատորին , խորհրդապաշտութեան այն ուղղութիւնն է , որուն իր քով ի՞նչ ըլլալը կը կարծեմ թէ կարելի եղաւ հասկնել , եւ որ , կոչուած է , կորուստը պատրաստելու որ եւ է գրողի՝ որ յանձնուի այդ ձգտումին , դրական այդ ուղիին , ինչպէս Նոր Տաղերու հեղինակը , բացառիկ եռանդով մը փարած անոր և ճշմարիտ առաջապահ մը իր գիրքով , հիմնովին զոհադործուած խորհրդապաշտ բանաստեղծութեան նուիրադործումին , մեր մէջ առաջին անգամը ըլլալով ա՛յնչափ չեղտակի և ա՛նչափ բոլորանուէր կերպով :

Այդ ձգտումը անկումի ճամբան է մեր բանաստեղծութեան համար , գահավէժ մոլորումը , որմէ՛ պէտք է խուսափիլ գիտնայ բանաստեղծութիւն ընելու եռանդը ունեցող ամէն գրիչ : Այդ հոսանքը տարածուելով եւ վարակելով ուրիշներն ալ , վաղուան բանաստեղծութեան կոչնականները , կրնայ յուր ազդեցութիւն մը առաջ բերել մեր բանաստեղծութեան վրայ , խաթարելով ու եղծելով զայն իր արդէ՛ն վտիտ գեղեցիկութիւններէն : Այդ պատուաստը վտանգ մըն է , չարիք մը , որուն թեւարկութեանը դէմ կարելի տմէն թումը պէտք է կանգնել : Եթէ մեր բանաստեղծութիւնը պէտք ունի պատուաստի մը , ան ալ աւելի՛ հայացի , աւելի՛ տոհմիկ դրոշմին պատուաստն է , ըլլալու համար իր ճշմարիտ դերին ու կոչումին մէջ , ինչպէս ամէն գրականութեան և արուեստի դործերու , որոնք պէտք են ըլլալ պատկերը և արձագանքը այն համայնքին , բարքերուն և յուզումներուն , որոնց ծնունդն են :

Այդ պատուաստը պէտք չէ՛ ըլլայ անխմտ ու կապկային նմանութիւնը յոսի սեւապօղիւնի մը , մոլոր արուեստար արուեստակեալ բաւականախումներու , ծիծաղելի ոչնչաբարբանութիւններու , անհեթեթ ու բռնադրօսիկ բացատրութիւններու և անմերկուծելի առումներու , որոնց ամբողջութիւնը սխմելով սխմելով ոչինչ կարելի է հանել մէջէն , քանի որ Գաղափարը և Նիւթը կը պակսին անոնց ետեւ :

Պէտք է մաքառիլ այդ կեղծ արուեստին միջրոպը վանելու , արգիլելով անոր մուտքը և սպրդումը մեր բանաստեղծութեան անարիւն երակներուն մէջ , ուր կրնայ անդարմանելի աւերներ գործել , վատախտարակ համաճարակի մը թոյնը կաթեցնելով հոն :

ՆԱՈՎԻ ԱՐՄԷՆ

“ՄԱՍԻՍ” ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՄԱՍԻՍի այս քիւով, ինչպէս յայտնի է, կը լրանայ նոր Շրջանի Ա. Տարին, զոր կը փակենք արագին հաճոյքով մը՝ մեր ընթերցողներուն ու բաժանորդներուն հետ։ Չենք փորձեր պերճախօսութեան ճիգ մը ընել, ներփողը հիւսելու համար գրական այս ձեռնարկին։ Ընթերցող հասարակութեան կը քողունք ակնարկ մը սեւեռել միայն նիւթերու Ցանկին, որ ինկնին մեծապէս պերճախօս է, գործին գրական արժէքին, ստանձնած դերին եւ ընդգրկած գրական ոգիին ու ձգտումին տեսակետով։ Հոն խմբուած Թրքահայ ամենեւեմ հոշակուած եւ հեղինակաւոր գրագետներուն համայնասպասկերը, իրենց խնամուած ու ամենեւեմ ընկիր աշխատակցութիւններովը՝ պէտք եղածէն աւելի պերճախօս է, եւ, կը յուսանք, արժանի գնահատութեանը եւ համակրութեանը ընթերցող հասարակութեան։ Պէտք է ըսել քե՛ս այս տեսակ ձեռնարկի մը մէջ, նիւթական զոհողութիւնը եւ անվիաս ջանքը՝ անհրժեշտ զօրավիգներն են գործին շարունակութեանը։ Մենք բոլոր կարելի միջոցները եւ զոհողութիւնները լիարժեք յայտնակն իրազօրութեանը, սպասելով հանրութեան քաջաշէնութեան՝ հանդիպ գործին իր սաք վերաբերումով։ Կը վստահիմք քե՛ս ան հետզհետեւ աւելի պիտի ամուսնանա՞նք իր այդ սերին մէջ, առիթը, միջոցը եւ դիւրութիւնը տալով մեզ՝ աւելի՛ն կարենալ ընելու մեր իտեպը իրականացնելու։ Առաջիկայ քիւով, կը քննարկենք մեր Բ. Տարիի Շրջանը, Դեկտ. 1, երբ սկսած էինք մեր Ա. Տարին։ Այս առիթով, ՄԱՍԻՍի Բացառիկ Թիւ մը կը հրատարակենք, ստուար ծաւալով ու ճոխ բովանդակութիւնով, հաստատ յոյսով մը՝ անակնկալ հաճոյք մը պատճառելու մեր ընթերցողներուն։ Այդ քիւին մէջ պիտի երեւան մեծ մասը մեր աշխատակիցներուն, իրենց խնամուած եւ ընտելեցողն զրուածներով։ ՄԱՍԻՍ առաջիկայ տարի աչ պիտի ունենայ իր Գրական Պարգեւաւոր Մրցումները, մեծապէս հրապուրիչ ու շահագրգռական, ինչպէս նաեւ ուրիշ ոչ-գրական պարգեւաւոր մրցումներ, կողմին վրայ, որոնք, ուրախ ենք դիտելով որ՝ հանրութեան բարձր գնահատութեանը կ'արժանանան եւ հաճոյք մըն է մեզի՝ ստանալ շարունակ անոնց մասին քաջմարտի շնորհաւորականները ծանօթ եւ անծանօթ անձնաւորութիւններու, որոնք կը շեշտեն Հայ լրագրութեան մէջ մեր ունեցած առաջնութիւնը՝ գրական նորութիւններու եւ բաժանորդագրական նպաստաւոր պայմաններու ձեռնարկներով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՅՈՒՄԸ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ «ՄԱՍԻՍ» ԴՈՐ ՇՐՋԱՆԸ

Բ. ՏԱՐԻՆ

Մեր այն բաժանորդներուն՝ որոնց բաժանորդագրութիւնը կը լրանայ, պիտի ուղէինք գլխաւ տալ թէ՛ պէտք է փութան նորոգելու իրենց բաժանորդագրութիւնը, անյապաղ մեզի հասցնելով տարեկան փոխարժէքը Մասիսի, որպէս զի առանց ընդհատումի կանոնադրաբար շարունակուի առաքումը իրենց թերթին։ Նոյն բանը ո՛չ-բաժանորդներէ անոնց՝ որոնք փափաքօյ են առաջիկայ տարուան մէջ բաժանորդագրուելու, ինչպէս կը յայտնեն իրենց նամակներով։

Ս Խ Ա Լ Մ Ո Ւ Ն Ք Մ Ը

Նկարչական ցուցանանդէսէ մը վերադարձին, Տիկին Ալիս Բէքօ և Տիկին Վէրա Աշօֆ, երկու երիտասարդ կիներ, կուգային դէպի Բլաս Ռուայալ թէյ մը առնելու, այն à la mode տուներէն մէկուն մէջ, որ ժամադրաւորը եղած է ժամը չորսին բոլոր նորածնութեանց սուշնէրէ, նկարչական և ուրիշ արուեստագիտական ցուցանանդէսներէ դարձեալ Տիկիններու: Այս անգամ ալ, ինչպէս միշտ, որանը խնայուած էր բոլորովին: Երկու երիտասարդ կիները դժուարութեամբ անցան խիտ շարքերուն մէջէն և հազիւ անկիւն մը գտան տեղաւորուելու:

— Ահ . . . վերջապէ՛ս, ըստ Տիկին Ալիս, նստելէ ետքը, և իր բաց-դօրչադոյն ձկուն թուշեայ շրջադիտակն քղանցքները ծունկերուն վրայ բերելով, միւս ձեռքովը նրբօրէն նկարուած հովանար մը բացաւ և պատրաստուեցաւ հովանութիւն բաց նոյն միջոցին իսկ ուրիշ ահ . . . մը, որ անախորժ անակնկալի արտայայտութիւնն էր, ոչադրութիւնը դարձուց իր բնկերութիւն:

— Ի՞նչ ունիս, տիկին, ըստ Վերա, իր կարգին զբաղած շրջադիտակը տեղաւորցնելու. և իր կապոյտ աչքերը բարձրացուց բարեկամութիւն վրայ:

Ալիս բոլորովին տժգոյն էր. քունն յուզմունքի ենթարկուած՝ աչքերը դոյսած էր կարծես չտեսնելու և չգիտնալու համար և հովանարովը ծածկած էր դէմքը աջ կողմէն: Վերա բնազդութեամբ այն կողմը դարձաւ և վնասեց. և անմիջապէս հասկնալով, զէպի՝ ընկերութիւն ուղղեց իր խորատաշ գլուխը:

— Ի՞նչ տղայ ես, Ալիս, իրաւ որ, ես ալ կարծեցի թէ բան մը կայ . . . ըսէ՛, մեզի պէս կիներուն կը վայլէ՞ յուզուիլ այս տեսակ ոչինչ բաներու համար, պղտիկ կարուհիներու նման . . . ինծի նայէ՛ . . . Ծ՛ն, ահա տաիկ գեղեցիկ դոյները կը վերադառնան, աչքերդ բաց, Ալիս . . . չուտով, չուտով, անմիջապէ՛ս: Դիտե՛ս, աւելցուց, աւելի դորովագին և խզուելի ձայնով, երբ նայուածքիդ լոյսը չտեսնեմ, ինծի ամէն բան մութ կ'երևայ:

Վերաին վերջին բառերուն՝ Ալիս ինքզինքին հկաւ. թեթեւ մը ժպտեցաւ. բարեկամութիւն և իր գեղին աչքերը, որոնց մէջ վարանող անձկութիւն և անանգստութիւն կար, ուղղելով բազմութեան վրայ, ըստ. . . մեքենաբար:

— Ինչչա՛մի ծերացեր է, ընկճուած, լմնցած մարդ մըն է ալ:

— Պա՛հ, ի՞նչ փոյթդ, զեռ առոր վրա՞յ կը խորհի՛ս:

— Ամէն պարագայի մէջ, չպիտի ուզէի որ իմ պատճառովս . . . Վերա ականջները դոյցեց:

— Լաէ՛ , Ալիս , լռէ՛ . ինչ sentimental կին ես , միշտ նոյնը , Աստուածս , միշտ նոյնը . . . Երբե՛ք Հովտի կազմուիս , պարապ բան է . և արդէն , գիտե՛ս , մեկնեցաւ . պէտք է մոռնալ զայն և մեր կարեւոր նիւթերուն դանք . . . Ըսէ՛ տեսնեմ , ինչ պատրաստելու վրայ ես նաւ վիճակներուն երեկոյթին համար :

Ալիս խանդավառեցաւ :

— Ես մտադիր եմ բայ-կանանչ շղարչէ հագուստ մը շինել ծանր բանուածքներով . . .

Կանանչը ինծի կ'երթայ , Բօլը ըսաւ ո՛ր . . .

— Ա՛հ , Բօլը յաճախ կը տեսնա՞ս :

— Մեր բոլոր հինգ շարթիկներուն կու գայ . ամուսինիս հետ շատ կ'սպասեմ . . . Գիտես ինչպէս դժուարած է Ալպէ՛ս՝ բարեկամներու համար . այս միջոցին միայն Բօլը հանդերձելու երեւոյթ ունի . . . ես ալ իրեն հաճոյք պատճառելու համար , շտապը , զինքը կը շփացնեմ , քիչ մը , արդէն շատ հաճելի ալ երիտասարդ է . . . պէտք է քեզի ներկայացնեմ օր մը , կ'ուզե՞ս . . .

— Ինչո՞ւ չէ , ըսէ թէ ի՞նչ ըսաւ Բօլ կանանչ գոյնին համար :

— Է՛հ , ըսաւ թէ կանանչ գոյնը իմ վրաս մասնաւոր երանգ մը ունի . իմ մորթիս և մաշկուսու գոյնը . . . աչքերուս ալ , կ'երեւայ . . . սքանչելի կերպով կը ներդաշնակուի կանանչին հետ , բայց այն տեսակ կանանչ մը՝ որ կանանչ չըլլայ , ինչպէս ըսեմ , նիւթը կանանչ երանգի թրթռացում մը ունենայ միայն , այնքան մարած , այնքան փափուկ որ՝ կարծես թէ որ և է թեթեւ հովի մը պիտի անցնի , անհետանայ . . .

Երկու բարեկամուհիները երկար ատեն խօսեցան հագուստի , գոյնի , գլխարկի և քիչ մըն ալ օրուան տեսած նկարներնուն վրայ : Ժամանակը կ'անցնէր և սրահը պարպուելու վրայ էր . թէյի բուրումնաւէտ շոգին կը ծածանէր վանիլիտով և ամէն կարգի համեմունքով պատրաստուած կարկանդակներու ամորժաբեր հոտին հետ : Բաւական կազդուրուած էին ալ և Ալիսի աչքերուն տակէն դրեթէ անհետացած էր մութ ծիրը : Իրենց շրթունքները այնքան կարմիր էին որ՝ չպարուած կը թուէին : Վերա մեծ զուարթութեան մէջ էր և խօսաբար կը շատախօսէր :

— Կը տեսնե՞ս , սիրելիս , կ'ո՞վ գեղեցկութիւնը շատ անկայուն բան է , ոչինչներէ կազմուած : Ամէնէն ագեղ կ'ընեն ալ գեղեցիկ օրեր կ'ունենայ երբեմն : Ես առտուն հայելիին մէջ տաաջին նայուածքով կը հասկնամ թէ այսօր յաջո՞ղ թէ՛ ձախորդ օր մըն է ինծի համար : Օրեր կան որ՝ չես գիտեր ինչո՞ւ և ուրիշ՝ մասնաւոր ճառագայթ մը կ'ըլլայ աչքերուդ մէջ . գոյներդ , մորթիդ նոր բացուած ծաղիկի թարմութիւն մը կ'ունենայ . . . յետոյ ուրիշ անվրէպ միջոց մը կայ հասկնալու . պոստ մը անտառին մէջ կամ օր և է տեղ մը . մարդոց ,

անցորդներուն աչքերուն մէջէն կը հասկնաւ քու այն օրուան վիճակդ .
անոնք աւելի հաւատարիմ հայելիներ են . . .

Ալիս չըթուէր ռօմի գաւաթի մը կրթնցուցած՝ մտիկ կ'ընէր հետ-
զհետէ երազկոտ . վերջապէս իր ներքին մտածումին անսալով կրկնեց
դարձեալ մեքենարար :

— Ինչչա՜փ ծերացեր է , ինչչա՜փ ընկճուեր է տնկէ ի վեր :

Քիչ մը ետքը՝ երբ կառքին մէջ ընկողմանած արագութեամբ կ'եր-
թային , վերա ըսաւ իր բարեկամունքին :

— Գիտե՛ս , Ալիս , չառ հետաքրքիր եմ իմանալու այդ մարդուն
պատմութիւնը , իր վարմունքը բաւական եղական եղած է միշտ :

Ավրնիւ տը Պուա տը Պուլօնը կը գտնուէին . Ալիս փափաքեցաւ
կառքէն իջնալ և քալել . անհանդուրժելի ջերմութիւն մը զգար , հա-
կառակ աշնանային զով օդին : Աքանչելի գոյներ ամպի նման կը տա-
րածուէին երկինքին վրայ և տերեւաղուրկ ծառերը Ավրնիւին հեռաւո-
րութիւններուն մէջ կ'երկարէին մշուշով պարուրուած և կը կորսուէին
դորշ — մանիշակազոյն մթնոլորտի մը մէջ : Անհամար կառքեր կը սու-
րային և երբեմն ամբողջ ծառուղին ծածկուած կը թուէր իրենց շար-
ժումովը : Ալիս բաւական վարանելէ ետքը սկսաւ վերջապէս :

— Փայլուն և գեղեցիկ երիտասարդ մըն էր երբ ճանչցայ զայն առա-
ջին անգամ , ամուսնինս ընկերներէն մէկուն տունը : Գիտե՛ս թէ ինչ-
քան դժուար եղած են մեր ամուսնութեան առաջին տարիները : Այսպէ-
սին ձեռագիրները այն գինով չէին ծախուեր ինչպէս այսօր : Միւս
կողմէ՝ մեր նիւթական վիճակին չհամեմատող կենցաղ մը ունէինք . . .
ստիպուած էինք այդ բանին շատ մը պտտառններով : Ես ալ , պէտք է
ըսեմ , ծարուր ունէի պերճանքի , աշխարհիկ կեանքի , գեղեցկութեան :
Յաճախ շատ մեծ անձկութեան մէջ կ'ըլլայինք , օրեր կային որ իրաւամբ
գլուխնիս կը կորսնցնէինք երկուքս ալ : Ով կրնար գուշակել մեր ներ-
քին կեանքի տագնապները : Շատ երիտասարդ էի այն տառն և հակու-
ռակ խիստ մեծ ընդունելութիւն գտնելու՝ բոլոր մտած սալօններս , հա-
կառակ չըջապատուած , զրեթէ պաշտուած ըլլալուս , օրեր կային որ
դժուարաւ կը յաջողէի ժպտիլ . . . այնքա՛ն խորապէս տխուր էի եր-
բեմն : Չեմ գիտեր թէ կը յիշե՞ս , այդ միջոցներուն էր որ ճանչցայ նաև
քեզի . . .

— Օ՛հ , ինչպէ՛ս չեմ յիշեր . . . սքանչելի կիներ որ էին այն տոնն :
Դեռ աչքիս առաջին է գեղեցիկ հասակդ , զրեթէ միշտ ձերմակ հա-
զած , գէժքիդ նրբութիւնը , անարիւն և տառապած մարդիկներու յա-
տուկ նրբութիւն մը՝ որ չեմ գիտեր ի՞նչ աղիւտութիւն մը կուտար մոր-
թիդ և յետոյ աղուոր դեղին աչքերդ՝ որոնք բծաւորուած կ'երեւային
սեւ կէտկիտումներով , մատակ առիւծի աչքեր , այնքան սլայծաւ , այն-
քան ջինջ երբեմն , որոնց մէջէն կարծեա հոգիդ կը տեսնուէր :

Ալլիս պահ մը լռիկ մտիկ ըրաւ թարեկամութիւն և աչքերը սեւեռեց զիմացը , իբր թէ ինքն ալ տեսնար իր երբեմնի սխրագործը :

— Բոլոր անոնք որ կը դարպասէին զիս այդ միջոցին , հասկցան որ իմ երիտասարդ կնոջ գլուխս պարտաւ չէր : Միւս կողմէ գիտէին թէ՛ Ալպէս զիս յաճախ մինակ կը ձգէր և եթէ առիթը ներկայանար՝ առանձին կը զուարճանար Բան մը չկայ այնքան քայքայիչ նոր ամուսնացողներու համար , որքան նիւթական դժուարութիւններու մտահոգութիւնը : Երեք տարուան ամուսնութենէ ետքը գրեթէ իրարմէ անկախ կ'ապրէինք և միայն զիրար կը գտնէինք մեր հոգերուն , զրամի դէպքին , մեր կացութեան դժուարութիւններուն վրայ խորհրդակցելու համար : Յաճախ մեր տեսակցութիւնները թունաւոր ակնարկութիւններով զիրար տմբատանելով կը վերջանային : Մէկ խօսքով , չափազանց դժբաղդ և հոգեբով պաշարուած էի : Այդ միջոցին էր որ , չեմ գիտեր ինչպէս , և ինչ հիմի վրայ , կարծեցին թէ իմ տխրութեանս պատճառը սիրային խնդիր մըն է : Իրաւ է թէ ուրիշ ի՞նչ կրնային վերագրել ինծի պէս կնոջ մը համար : Յետոյ օր մըն ալ Անոր անունը արտասանեցին : Նախ կարեւորութիւն չտուի բնականաբար և թողուցի որ ըսեն : Զարմանալին ան էր որ՝ ինքը մասնաւոր գիրք մը սկսած էր բռնել ինծի նկատմամբ : Զափազանց շողօքորթուած այդ տեսակ բանաստանքէ մը , իր գեղեցիկ երիտասարդի անամէջ գլուխը կը պտտցնէր բոլոր այն սալօններուն մէջ , ուր կրնայի գտնուիլ : Զուարթ , գոհ և երջանիկ կ'երեւար ինքը , մինչ ևս աժգոյն , ընկճուած ու ակուր էր : Վեց ամիս ետքը ամէնուն համար բուռն սէրէ մը , չբաժնուած և արհամարհուած զգացումէ մը բռնուած էի : Կիները մեղքնալ կը ձեւացնէին . ինձմէ յոյսերնին կտրած երիտասարդներ կը ծաղրէին զիս . . . : Օ՛հ , պէտք է իմ կացութեանս մէջ դառնուած ըլլար , հասկնալու համար թէ ինչչա՛րի գոհնիկ և թունաւոր ատելութիւն կայ բոլոր այդ պճնուած , զարդարուած և գեղեցիկ ու շնորհալի երեւոյթով քաղերաւորներուն մէջ , որոնք ձեռքի սեղմումի մը մէջ գիտեն . վիրաւորել քեզ , որոնց նայուածքը նախաախնքի մը պէս կ'ըմբոստացնէ հոգիդ , իրենց ձայնին շեշտը , բոլոր կաւերը միակ սխրեղիս բառին՝ որ երբեմն մինչև լրբութեան կը հասնի : Բոլոր ատոնք դեռ ականջիս մէջն են , իրենց ամէնէն նրբին երանգներովը : Բառ մը չէր ուղղուեր իմ հասցէիս՝ որուն մէջ չար ականարկութիւն մը չըլլար . ամէնէն բարիները՝ ամէնէն անհանգուրժելիներն էին դարձեալ . այնքան մեղքացան իմ վրաս որ՝ ամբողջ ընկերութեան համար ալ «խեղճ տիկին Ալիսն» էի :

(Յաջորդով)

ԶԱՊԷԼ ԵՍՍՍՅԵԱՆ

ԿՈ՛ՅՍ ՏԻՐԱՄԱՅՐ

ԵՂԻՇԷ: ԵՊԻՍԿ. ԴՈՒԲԱՆԻՔ

«Անշաղախ ըս նմանութեան պատկերի
սրուսեկին քարձրութեան» .

Նուս՛գ մըն է պարսկական , երանգաճո՛խ, դաշնաշուր ,
Որուն սակ ա՛ն կը շեցնէ միսքիսկական դաշնաւոր
Ճախրանկներուն հետ վրձնէրոյ պատկերն Անոր կուսութեան :

«Անշաղախ ըս նմանութեան պատկերի
սրուսեկին քարձրութեան» .

Այս Իրանեան խաղերոյ վանականը պրկուած
Այգիէն շիբեր կը կարէ որոնք ամենքն ալ մեկանց
Դեմքին վրայ կը ստոյն . կարծես խաղո՛ղ օրհնութեան :

«Անշաղախ ըս նմանութեան պատկերի
սրուսեկին քարձրութեան» .

Վանականը հիացիկ կուտէն դուրս՝ դողահար
Ի՛նչ արցունքներ կը քափէ որոնք ամենքն ալ գոհար՝
Օծուած ֆաւերն յիշեցնեն խաչին աչքին արբազան :

«Անշաղախ ըս նմանութեան պատկերի
սրուսեկին քարձրութեան» .

Իր արցունքը՝ խաղողին , խաչին՝ օծուած գոհարին .
Հետ անցնութիւն մը կազմած Աստուածամօր կը յառին .
Օրհնեալ խաղո՛ղ կուսայ ինձ այդ տալիքը նարեկեան :

«Անշաղախ ըս նմանութեան պատկերի
սրուսեկին քարձրութեան» .

Կուռ փերքուածը՝ Տիրուհին , խաղողօրհնեկն ալ իրեն՝
Այգիէն ծորոյ արցունքին կայրակումն է գաղտնիքն .
Օրհնեալ խաղո՛ղ կուսայ ինձ այդ տալիքը նարեկեան :

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

Ա. Լ. Ե. Ք. Ս. Ա. Ն. Ե. Ա. Ն. Ն. Ո. Ի. Ա. Գ. Ա. Հ. Ա. Ն. Գ. Է. Ս. Ը.

Առաջիկայ Հինգշաբթի դիշեր , Ժամը 9ին [Ե.] , Իւնիօն Պրան-
սէզի սրահին մէջ , տեղի պիտի ունենայ նուագահանդէս մը Տիրան
Պէյ Ալեքսանդրեանէ , որ ծանօթ է , թէ՛ Պոլիս և թէ՛ Եւրոպա ունեցած
իր յաջողութիւններովը Երիտասարդ տաղանդաւոր թաւջութակահարը ,
իր այս նուագահանդէսով՝ զօհացում կուտայ մէկ մեծ փափաքին երա-
ժշտասէր հասարակութեան , որ ա՛յնչափ բաղձացող է կրկին ծափելու
զինքը ասկէ առջի երաժշտական իր փայլուն յաղթանակներուն յիշա-
տակովը անմոռաց բեմին վրայ : Կատկած չի կայ թէ՛ նոր ու աւելի՛
չեւտուած յաջողութեան մը յայտնումին առթիւ պիտի ըլլայ իր սարքած
այս երեկոյթը , եզակիան ճշմարիտ վայելքի Ժամ մը՝ իր տաղանդին ու
կարողութեանը համակիրներուն :

ԳԵՐՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԵՓՈՏԸ

Ֆ. Է. Պէնէ, քէ՛ իմաստասիրութեան ուսուցիչ Պետլինի համալսարանին՝ իր Կրթութիւն եւ Դաստիարակութիւն անուն գիրքին մէջ գրած է. «Վարձատրութիւն եւ պատիժ տ'յն ատեն միայն անհրաժեշտ են, երբ կրթական միջոցը նպատակին չհասնիր: Կարելի եղածին չափ քիչ պէտք է գործածել զանոնք, և դազընցնել անմիջապէս՝ երբ կրթութեան բնական միջոցները կրնան անսեպ տեղը լեցնել»: Ուրիշ իմաստասէր մանկավարժ մը, Թէոտոր Վալց, իր Ընդհանուր Մանկավարժութիւնին մէջ կ'ըսէ որ՝ պատիժի գործութիւնը կը կայանայ իր առաջ բերած յուզումին մէջ. երբ պատիժը սովորական բան մը դառնայ, ալ ո'չ մէկ ազդեցութիւն կ'ունենայ: Վարձատրութիւնները՝ ա'լ աւելի վնասակար են բարոյագէտ, որովհետեւ նախանձ առաջ կը բերեն, ճիշդ ինչպէս պատիժներն ալ պարտքի մասին յոռի ըմբռնում մը կը ծնցնեն ուսանողին մէջ, վարժեցնելով զայն վախի համար միայն կատարել իր պարտքը: Գոմէնիուս, արդի դաստիարակութեան հիմնադիրն ալ, իր Didactica magnaին մէջ գրելով միեւնոյն զազափարը կը յայտնէ. «Դաստիարակը, կ'ըսէ, հետեւելով արեւին, որ կը սփռէ լոյս և ջերմութիւն, երբեմն անձրեւ և քամի, քիչ անգամ կայծակ և որոտում: Եղեաք է պատանիները հնազանդութեան մէջ պահէ, միշտ բարի օրինակով, երբեմն յորդորով և յանդիմանութիւնով, քիչ անգամ բռնի միջոցներով»: Գերմանները իրենց վարժարաններուն մէջ կը գործադրեն՝ իրենց դաստիարակներուն այս սկզբունքները:

Իր պարտքը կատարողը վարձատրութեան արժանի չէ՛, որովհետեւ իր պարտականութիւնը կատարած է միայն: Այս պատճառով քիչ անգամ ընծաներ կը արուին: Միայն այն տեղերը՝ ուր վարժարանին կա-

ՎՍԻՉՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

նոնք կը հրամայէ՝ պարգեւներ կը բաժնուին կանոնաւորապէս և պարբերաբար: Վարձատրութիւնները կը տրուին բացառիկ արդիւնքներու համար, այն պատանիներուն՝ որոնք ուսումի մէջ մասնաւոր կերպով առաջագէտ են և վարքի մէջ անզուգական: Քառլ Հիոցըլ, ուսուցիչ Թիւրինկէնի համալսարանին մէջ, իր մանկավարժական դաստիարակութիւններուն մէջ հակառակ է մրցանակ ստացող աշակերտներուն անունները լրագրիւնելու մէջ հրատարակելուն: Կ'առաջարկէ նաև մրցանակներու սահմանուած դրամագլուխը միշտ գործածել զպրօցական տուրքերէ ազատ ընելու աղքատ և գլխավոր արժանի ուսանողները, և ո'չ առաջադէմները: Վարձատրութիւն ընելու չէ, այլ օգնութիւն և այս զազափարը բուական ընդունելութիւն գտած է գերմանական վարժարաններու մէջ: Լիբսիոյ Սլադեթ վարժարանին մէջ, 1894ին՝ 685 աշակերտներու 27ը

միայն մրցանակ ստացան , իսկ 226ը ազատ-եղան դպրոցական տուրքերէ . 64ը բոլորովին զերծ . 20ը թոշակ ունեցան . 10ը հարկւորական մարք . 50ը յիսունական : Մրցանակարտչութիւնը կ'ըլլայ դաստարանին ամբողջ աշակերտներուն առջեւ : Գերմանիոյ մէջ մրցանակարտչութիւնները երբեք հասարակութեան առջեւ չեն ըլլար :

Անգամ մը հաստատելէ ետքը այն գաղափարը թէ՛ դաստարակը պէտք չէ պատժէ ուսանողը , այլ բարեացակամօրէն ուզէ՛ք և թէ՛ պատիժի դիմելը ամէնէն վերջին միջոցն է , Գերմանիոյ մէջ պատիժի

ՊՍՏԻՃԱՆԵՐԸ

